ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N _____

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

ք. Երևան «____» _____ 20.. թ.

Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիան (այսուհետ՝ ՀՀ ԳԱԱ), ի դեմս նախագահ Աշոտ Սաղյանի, որը գործում է ՀՀ ԳԱԱ-ի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «ՀՀ ԳԱԱ Մոլեկուլային կենսաբանության ինստիտուտ» ՊՈԱԿ-ը (այսուհետ՝ Կազմակերպություն), ի դեմս տնօրեն Արսեն Առաքելյանի, որը գործում է Կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ Կողմեր), հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի նոյեմբերի 17-ի N 1121 որոշումը (այսուհետ՝ Որոշում), «Մարդու, կենդանիների, բույսերի ֆունկցիոնալ և պրոպուլյացիոն գենոմիկա և բջջային ակտիվության կարգավորում» ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1. Պայմանագրով ՀՀ ԳԱԱ-ն պարտավորվում է ծրագրի իրականացման նպատակով Կազմակերպությանը հատկացնել Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեով նախատեսված 227,253,800 (երկու հարյուր քսանյոթ միլիոն երկու հարյուր հիսուներեք հազար ութ հարյուր) ՀՀ դրամ գումար, իսկ Կազմակերպությունը պարտավորվում է Ծրագիրն իրականացնել Որոշմամբ և Պայմանագրով սահմանված կարգով:

1.2 Պայմանագրի գնի մասին համաձայնության արձանագրությունը, Ծրագրի առաջադրանքը, *այդ թվում՝ նպատակը*, օրացուցային պլանը, *այդ թվում՝ ակնկալվող արդյունքները, դրանց որակական և քանակական ցուցանիշները*, նախահաշիվը և կատարողների մասին տեղեկությունները ներկայացված են Պայմանագրի հավելվածներում:

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1 ՀՀ ԳԱԱ-ն իրավունք ունի՝

2.1.1 Կազմակերպությունից պահանջելու կատարել Պայմանագրի **2.4** կետով նախատեսված պարտավորությունները,

2.1.2 ցանկացած ժամանակ ստուգելու Կազմակերպության կողմից իրականացվող Միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը,

2.1.3 չընդունելու իրականացված Միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և Կազմակերպությունից պահանջելու վճարել Պայմանագրի **6**-րդ մասով նախատեսված տուգանքը,

2.1.4 առանց իրականացված Միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու Պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

2.1.4.1 Կազմակերպությունը ժամանակին չի սկսում Ծրագրի իրականացումը, կամ Ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,

2.1.4.2 Կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է Ծրագրով նախատեսված Միջոցառումների իրականացման ժամկետները (նախատեսված լինելու դեպքում),

2.1.4.3 իրականացված Միջոցառումները չեն համապատասխանում Ծրագրով սահմանված պահանջներին,

2.1.5 Պայմանագիրն օրենքով կամ Պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ Միջոցառումների արդյունքները:

2.2 Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1 ՀՀ ԳԱԱ-ի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու Պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները,

2.2.2 Ծրագրի կատարման համար, օրենսդրությամբ սահմանված կարգով, ներգրավելու երրորդ անձանց,

2.2.3 ՀՀ ԳԱԱ-ի գրավոր համաձայնությամբ այլ կազմակերպություններին հանձնել կատարված աշխատանքների արդյունքները:

2.3 ՀՀ ԳԱԱ-ն պարտավոր է՝

2.3.1 Ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել Կազմակերպությանը,

2.3.2 ընդունել համապատասխան որոշում՝ իրականացված Միջոցառումների մասին ներկայացված տարեկան հաշվետվության վերաբերյալ,

2.3.3 ստուգել ու ամփոփել Կազմակերպության կողմից Ծրագրի իրականացման ենթակա գործառույթների գծով ձեռք բերված քանակական ու որակական ցուցանիշների վերաբերյալ տեղեկությունների հիման վրա հաշվարկված գումարի չափի մասին հաշվարկները և իր եզրակացության հետ միասին դրանք ներկայացնել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունն՝ վերջինիս կողմից սահմանված կարգով և ժամկետներում:

2.4 Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1 Ծրագիրը կատարել անձամբ,

2.4.2 Ծրագիրը կատարել առաջադրանքին համապատասխան և դրա արդյունքը ՀՀ ԳԱԱ հանձնել սահմանված ժամկետում,

2.4.3 Պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել Ծրագրով և Պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով,

2.4.4 կատարել ՀՀ ԳԱԱ-ի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները,

2.4.5 աշխատանքի ակնկալվող արդյունքի ստացման անհնարինության հայտնաբերման կամ աշխատանքը շարունակելու աննպատակահարմարության մասին եռօրյա ժամկետում տեղեկացնել ՀՀ ԳԱԱ,

2.4.6 ՀՀ ԳԱԱ ներկայացնել հաշվետու ժամանակաշրջանում Պայմանագրի շրջանակներում վճարման գումարի չափի վերաբերյալ հայտ (այսուհետ՝ Հայտ)՝ մինչև հաշվետու ամսվան հաջորդող ամսի 10-ը: Հայտում նշվում է Պայմանագրի շրջանակներում Կազմակերպության կողմից ծրագրի իրականացման ենթակա գործառույթների գծով ձեռք բերված քանակական ու որակական ցուցանիշների վերաբերյալ տեղեկություններ և դրանց հիման վրա հաշվարկված գումարի չափի մասին մանրամասն հաշվարկներ,

2.4.7 Պայմանագրի նախահաշվում ֆինանսական ցուցանիշներից շեղումների դեպքում ՀՀ ԳԱԱ ներկայացնել հիմնավորում,

2.4.8 իրականացնել Ծրագրի շրջանակներում ՀՀ ԳԱԱ-ի կողմից տրամադրված գումարների՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված հաշվապահական հաշվառում,

2.4.9 Ծրագրի ավարտից հետո ՀՀ ԳԱԱ ներկայացնել միջոցառումների իրականացման մասին տարեկան հաշվետվություն՝ դրան կցելով գիտական ծրագրի հաշվետվության հանձնման-ընդունման արձանագրություն,

2.4.10 Պայմանագրի գործողության ընթացքում ապահովել Ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու ՀՀ ԳԱԱ-ի հնարավորությունը,

2.4.11 Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան,

2.4.12 Պայմանագրով նախատեսված միջոցառումների իրականացման արդյունքում առաջացած տնտեսումները/խնայողությունները վերադարձնել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե՝ ոչ ուշ, քան մինչև ընթացիկ տարվա դեկտեմբերի 25-ը:

3 Ծրագրի ֆինանսավորման չափը

Ծրագրի ֆինանսավորման չափը կազմում է 227,253,800 (երկու հարյուր քսանյոթ միլիոն երկու հարյուր հիսուներեք հազար ութ հարյուր) ՀՀ դրամ:

4 Մոնիթորինգ

4.1 ՀՀ ԳԱԱ-ն ցանկացած ժամանակ կարող է իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով Ծրագրին առնչվող փաստաթղթեր և նյութեր:

4.2 Մոնիթորինգն իրականացվում է համաձայն Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 20.05.2020 թվականի N 638-Ա/2 հրամանով հաստատված «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի ֆինանսավորմամբ իրականացվող գիտական և գիտատեխնիկական գործունեության ծրագրերի և թեմաների մշտադիտարկման կարգի»:

5 Վճարման կարգը և ժամկետները

5.1 ՀՀ ԳԱԱ-ն Կազմակերպությանը վճարումները կատարում է Հայտն ընդունելու օրվան հաջորդող 20 աշխատանքային օրվա ընթացքում, եթե Ծրագրով սահմանված չեն վճարումների կատարման այլ կարգ և ժամկետներ:

5.2 ՀՀ ԳԱԱ-ն Պայմանագրի գինը վճարում է Պայմանագրում նշված Կազմակերպության հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով, որն ըստ եռամսյակների բաշխվում է հետևյալ կերպ. բյուջետային տարվա 1-ին եռամսյակում՝ 20 տոկոս, 2-րդ եռամսյակում՝ 25 տոկոս, 3-րդ եռամսյակում՝ 25 տոկոս, 4-րդ եռամսյակում՝ 30 տոկոս:

6 Կողմերի պատասխանատվությունը

Պայմանագրով և Ծրագրով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում Կազմակերպությունը պարտավորվում է փոխհատուցել չիրականացված Միջոցառման չափով և վճարել տուգանք՝ չիրականացված Միջոցառման համար նախատեսված գումարի 1 տոկոսի չափով: Ընդ որում, տուգանքի վճարումը Կազմակերպությանը չի ազատում իր պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պարտականությունից: ՀՀ ԳԱԱ-ն սույն կետով նախատեսված գումարները հաշվարկում և հաշվանցում է Կազմակերպությանը վճարվելիք գումարներից:

7 Պայմանագրի գործողության ժամկետը

Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի ստանձնած պարտավորությունների՝ ամբողջ ծավալով կատարումը:

8 Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու Պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9 Եզրափակիչ դրույթներ

9.1 Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են Կողմերի կողմից:

9.2 Պայմանագիրը կնքվում է երկու օրինակով, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է Պայմանագրի մեկ օրինակ: Պայմանագրի անբաժանելի մասն է Կազմակերպության կողմից ՀՀ ԳԱԱ ներկայացված Ծրագրի հայտը:

9.3 Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև Պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

10 Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիա	**ՀՀ ԳԱԱ Մոլեկուլային կենսաբանության ինստիտուտ**
ք. Երևան, Մարշալ Բաղրամյան 24	ք. Երևան, Հասրաթյան 7
Հ/հ 900011024115,	Հ/հ 900018005273,
ՀՎՀՀ 02704199	ՀՎՀՀ 00008732
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Նախագահ՝ _____ *(ստորագրություն)*	Տնօրեն՝ _____ *(ստորագրություն)*
ԱՇՈՏ ՍԱՀՅԱՆ	ԱՐՍԵՆ ԱՌԱՔԵԼՅԱՆ
Կ. Տ.	Կ. Տ.

Ծրագրի գիտական ղեկավար՝ _____ *(ստորագրություն)* (ԱՐՍԵՆ ԱՌԱՔԵԼՅԱՆ)

Հավելված N 1
«27» 01 2022 թ.
N 17 պայմանագրի

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՆԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ

Մենք՝ ներքոստորագրյալներս, ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի նախագահ Աշոտ Սաղյանը և Կազմակերպության տնօրեն Արսեն Առաքելյանը, վկայում ենք, որ Կողմերը համաձայնություն են ձեռք բերել «____» _____ 20.. թ. N _____ պայմանագրով աշխատանքի գնի վերաբերյալ՝ 227,253,800 (երկու հարյուր քսանյոթ միլիոն երկու հարյուր հիսուներեք հազար ութ հարյուր) ՀՀ դրամ գումարի չափով:

Սույն արձանագրությունը հիմք է Կողմերի միջև փոխադարձ հաշվարկների և վճարումների համար:

ՀՀ ԳԱԱ	Կազմակերպություն
Նախագահ՝	Տնօրեն
(ստորագրություն)	(ստորագրություն)
ԱՇՈՏ ՍԱՂՅԱՆ	ԱՐՍԵՆ ԱՌԱՔԵԼՅԱՆ

Հավելված N 2
«__27___»____01_____ 2022 թ.
N _____Ե-17_____ պայմանագրի

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

«Մարդու, կենդանիների, բույսերի ֆունկցիոնալ և պոպուլյացիոն գենոմիկա և բջջային ակտիվության կարգավորում» ծրագրի

1. Աշխատանքի կատարման հիմքը՝ Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջե:
2. Աշխատանքի նպատակը (1 պարբերություն):

ՀՀ ԳԱԱ Մոլեկուլային կենսաբանության ինստիտուտի ենթակառուցվածքի պահպանում: Մարդու և կենդանիների վտանգավոր բազմագործոն բնույթի հիվանդությունների ծագման, զարգացման և բարդացման հիմքում ընկած մոլեկուլաբջջային պաթոմեխանիզմների պարզաբանում, պոպուլյացիաների գենոմի ուսումնասիրություն, բնական և սինթեզված ակտիվ նյութերի ազդեցության կենսաբանական էֆեկտների և մեխանիզմների հետազոտություն, կարևորագույն նշանակություն ունեցող կիրառական հետազոտություններ:

3. Աշխատանքին ներկայացվող հիմնական պահանջները (մինչև 1 էջ):

Շենքային պայմանների պահպանում, կոմունալ վճարների ժամանակին կատարում, կոմունալ պայմանների ապահովում: Բազային, դրամաշնորհային և թեմատիկ ֆինանսավորման ծրագրերի շրջանակում իրականացվող հետազոտությունների վարչարարական աջակցություն և աշխատանքային պայմանների ապահովում:

4. Աշխատանքի բովանդակությունը (մինչև 3 էջ):

Ենթակառուցվածքի պահպանման շրջանակներում նախատեսվում է ապահովել էլեկտրաէներգիայի, ջրի, ջեռուցման անխափան աշխատանք, սարքերի աշխատանքային վիճակ, հետազոտությունների ամփոփման համար նվազագույն պարագաների և նյութերի ձեռքբերում՝ ընթացիկ հետազոտությունների և դրամաշնորհային ծրագրերի իրականացման նպատակով:

Մարդու և կենդանիների վտանգավոր բազմագործոն բնույթի հիվանդությունների ծագման, զարգացման և բարդացման հիմքում ընկած մոլեկուլաբջջային պաթոմեխանիզմների պարզաբանման շրջանակներում նախատեսվող հետազոտական խնդիրներն են.

- ուսումնասիրել ոչ վարակիչ քրոնիկ հիվանդությունների (սրտի և ուղեղի իշեմիկ հիվանդություն, կրծքագեղձի քաղցկեղ, ընտանեկան միջերկրածովյան տենդ, դիաբետ) զարգացման գենետիկական ռիսկերը և մոլեկուլային մեխանիզմները,
- հետազոտել քրոնիկ լիմֆոցիտար լեյկեմիայի ժամանակ մանր և խոշոր չափի նեոպլաստիկ բջիջների իմունոֆենոտիպերի և կենսաբանական ֆունկցիաների (պրոլիֆերացիա, ապոպտոզի ակտիվացում, իմունոգլոբուլինների և ցիտոկինների արտադրություն) տարբերությունները և դրանց կլինիկական նշանակությունը,

- հետազոտել կալիումական Kv2 անցուղիների մուտացիաների հետևանքով առաջացող էպիլեպտիկ էնցեֆալոպաթիայի և նեյրոզարգացման հիվանդությունների ախտաբանական մեխանիզմները *in vitro* պայմաններում,
- ուսումնասիրել կենսաակտիվ լիպիդային միջնորդների և ֆոսֆոինոզիտիդ-3-կինազային ուղու դերը միակորիզ բջիջների ակտիվացման գործընթացում աուտոբորբոքային և ուռուցքային հիվանդությունների ժամանակ,
- գնահատել կրեատինի ռադիոմոդիֆիկացնող ազդեցությունը մի շարք ուռուցքային և առաջնային բջջային կուլտուրաների վրա ճառագայթման թերապևտիկ դոզաների պայմաններում,
- ուսումնասիրել խոզերի աֆրիկյան ժանտախտի վիրուսի հնարավոր ռեպլիկացիան և (կամ) կայունության պատճառները հնարավոր վեկտորներում (արյունածուծ միջատներ, շիճուկով սնվող անողնաշարավորներ և տզրուկներ), որի համար նախատեսվում է կառուցել ինսեկտարիում՝ Aedes տեսակի մոծակների բազմացման նպատակով,
- ուսումնասիրել Հայաստանում առավել տարածված բակտերիալ ծագում ունեցող աղիքային վարակների հարուցիչների հակամանրէային դեղամիջոցների նկատմամբ կայունության տարածմանը նպաստող մոբիլ գենետիկական տարրերը:

Պոպուլյացիաների գենոմի ուսումնասիրության շրջանակներում նախատեսվող հետազոտական խնդիրներն են՝

- ուսումնասիրել Արցախի վերին քարեդարյան Քարին Տակ քարանձավի 2018-2020 թվականների պեղումների ընթացքում հավաքագրված բրածո նյութի կենդանական և բուսական բազմազանությունը,
- ուսումնասիրել հայկական պոպուլյացիայում քրոնիկ հիվանդությունների հետ ասոցացված գենետիկական վարիանտների հաճախականությունները գենոմի մակարդակով,
- իրականացնել սեքվենավորված վայրի խաղողի ամբողջական գենոմների կենսաինֆորմատիկական վերլուծություն, բիոտիկ և աբիոտիկ սթրեսի նկատմամբ կայունության գենոտիպ-ֆենոտիպային ուսումնասիրություն և պատվաստման արդյունավետության վրա ազդող մի շարք վիրուսների մոլեկուլային նույնականացում:

Բնական և սինթեզված ակտիվ նյութերի ազդեցության կենսաբանական էֆեկտների և մեխանիզմների հետազոտության շրջանակներում նախատեսվող հետազոտական խնդիրներն են՝

- ուսումնասիրել տարբեր հակավիրուսային միացությունների ազդեցությունը խոզերի աֆրիկյան ժանտախտի վիրուսի վաղ և ուշ փուլերի սպիտակուցների սինթեզի վրա,
- իրականացնել տուբուլինի պոլիմերիզացման նոր ինհիբիտորների *in silico* որոնում, որոնք կարող են դառնալ նոր և ավելի արդյունավետ ցիտոստատիկ դեղամիջոցների ստեղծման հիմք,

– ուսումնասիրել քաղցկեղային բջիջներում ինդուկցված տարբեր մակարդակի ԴՆԹ-վնասվածքների (միաշղթա և (կամ) երկշղթա ԴՆԹ-ի կտրվածքներ, վնասված պուրիններ/պիրիմիդիններ) պատասխան ռեպարացիոն ուղիների, այդ թվում՝ հոմոլոգ ռեկոմբինացիայի ուղի, ոչ հոմոլոգ ԴՆԹ-ի ծայրերի միացման ուղի, այլընտրանքային ոչ հոմոլոգ ԴՆԹ-ի ծայրերի միացման ուղի և հիմքերի էքսցիզիոն ռեպարացիայի ուղի, ակտիվացման օրինաչափությունները:

Կարևորագույն նշանակություն ունեցող կիրառական հետազոտություններն ուղղված են ախտորոշիչ թեստ համակարգերի մշակմանը, նախակլինիկական և թունաբանական փորձարկումների իրականացմանը՝ արտահանման ենթակա ապրանքատեսակների սերտիֆիկացիայի համար պետական հավատարմագրման մարմնին ներկայացնելու նպատակով, ինչպես նաև կենսաբանական նմուշների, նմուշառման պարագաների, ախտորոշիչ հավաքածուների փորձարկման և փոքրածավալ արտադրության ենթակառուցվածքի հիմնադրմանը:

Այլ գործունեություն՝

– միջազգային և տեղական դրամաշնորհային նախագծերի ներկայացում,
– հոդվածների, դրամաշնորհային հայտերի փորձագիտական գրաքննություն (peer-review),
– ՀՀ կառավարության գերատեսչությունների ներկայացրած նախագծերի ոլորտային փորձագիտական կարծիքի տրամադրում,
– երիտասարդ կադրերի մասնագիտական հմտությունների կատարելագործում և դասավանդում:

5. Ակնկալվող արդյունքները. աշխատանքային պայմանների ապահովում, որոնք թույլ կտան զբաղվել այլ ֆինանսական միջոցներով (տեղական և միջազգային դրամաշնորհներ, ծառայությունների մատուցում, դրամահավաքներ և այլն) իրականացվող գիտահետազոտական և գիտակրթական գործունեությամբ, իրականացված աշխատանքների արդյունքների տպագրություն գիտական հոդվածների տեսքով Web of Science, Scopus միջազգային գիտատեղեկատվական շտեմարաններում ընդգրկված ամսագրերում:

Կազմակերպության տնօրեն՝ _____ (ստորագրություն) (ԱՐՍԵՆ ԱՌԱՔԵԼՅԱՆ)

Ծրագրի գիտական ղեկավար՝ _____ (ստորագրություն) (ԱՐՍԵՆ ԱՌԱՔԵԼՅԱՆ)

Հավելված N 3
«__27___»_____01_____ 2022 թ.
N _____Ե-17_____ պայմանագրի

ՕՐԱՑՈՒՅՑԱՅԻՆ ՊԼԱՆ *

«Մարդու, կենդանիների, բույսերի ֆունկցիոնալ և պոպուլյացիոն գենոմիկա և բջջային ակտիվության կարգավորում» ծրագրի

հ/հ	Իրականացվելիք միջոցառման					
	անվանումը	համառոտ բովանդակությունը	կատարման ենթակա գործառույթների նկարագիրը	ակնկալվող արդյունքները, դրանց որակական և քանակական ցուցանիշները (այդ թվում՝ Հավելված N 2-ի 5-րդ կետում նշված ակնկալվող արդյունքները)	կատարման ժամկետները	պահանջվող գումարը (հազար դրամ)
1	Ենթակառուցվածքի պահպանում, ընթացիկ հետազոտություններ	Շենքային, կոմունալ և աշխատանքային պայմանների ապահովում, «Մարդու, կենդանիների, բույսերի ֆունկցիոնալ և պոպուլյացիոն գենոմիկա և բջջային ակտիվության կարգավորում» ծրագրով նպատակադրված ընթացիկ հետազոտությունների իրականացում	Վարչարարական, փորձարարական և տեսական, գիտակրթական աշխատանք, տվյալների վերլուծություն և ամփոփում, հոդվածների, նախագծերի պատրաստում	Web of Science, Scopus շտեմարաններում ընդգրկված ամսագրերում գիտական հոդվածներ, գիտական նախագծերի ներկայացում տեղական և միջազգային կազմակերպություններ, գրախոսականներ, սեմինարներ, սոցիալական ցանցերում գիտահանրամատչելի նյութերի ներկայացում, հաշվետվություն, զեկույց	1-ին եռամսյակ	45450.8
2	Ենթակառուցվածքի պահպանում, ընթացիկ հետազոտություններ	Շենքային, կոմունալ և աշխատանքային պայմանների ապահովում, «Մարդու, կենդանիների, բույսերի ֆունկցիոնալ և պոպուլյացիոն գենոմիկա և բջջային ակտիվության կարգավորում» ծրագրով նպատակադրված ընթացիկ հետազոտությունների իրականացում	Վարչարարական, փորձարարական և տեսական, գիտակրթական աշխատանք, տվյալների վերլուծություն և ամփոփում, հոդվածների, նախագծերի պատրաստում	Web of Science, Scopus շտեմարաններում ընդգրկված ամսագրերում գիտական հոդվածներ, գիտական նախագծերի ներկայացում տեղական և միջազգային կազմակերպություններ, գրախոսականներ, սեմինարներ, սոցիալական ցանցերում գիտահանրամատչելի նյութերի ներկայացում, հաշվետվություն, զեկույց	2-րդ եռամսյակ	56813.4
3	Ենթակառուցվածքի պահպանում, ընթացիկ	Շենքային, կոմունալ և աշխատանքային պայմանների	Վարչարարական, փորձարարական և տեսական,	Web of Science, Scopus շտեմարաններում ընդգրկված	3-րդ եռամսյակ	56813.4

* *Իրականացվելիք միջոցառումները ներկայացնել եռամսյակային փուլերով*

	հետազոտություններ	ապահովում, «Մարդու, կենդանիների, բույսերի ֆունկցիոնալ և պոպուլյացիոն գենոմիկա և բջջային ակտիվության կարգավորում» ծրագրով նպատակադրված ընթացիկ հետազոտությունների իրականացում	գիտակրթական աշխատանք, տվյալների վերլուծություն և ամփոփում, հոդվածների, նախագծերի պատրաստում	ամսագրերում գիտական հոդվածներ, գիտական նախագծերի ներկայացում տեղական և միջազգային կազմակերպություններ, գրախոսականներ, սեմինարներ, սոցիալական ցանցերում գիտահանրամատչելի նյութերի ներկայացում, հաշվետվություն, զեկույց		
4	Ենթակառուցվածքի պահպանում, ընթացիկ հետազոտություններ	Շենքային, կոմունալ և աշխատանքային պայմանների ապահովում, «Մարդու, կենդանիների, բույսերի ֆունկցիոնալ և պոպուլյացիոն գենոմիկա և բջջային ակտիվության կարգավորում» ծրագրով նպատակադրված ընթացիկ հետազոտությունների իրականացում	Վարչարարական, փորձարարական և տեսական, գիտակրթական աշխատանք, տվյալների վերլուծություն և ամփոփում, հոդվածների, նախագծերի պատրաստում	Web of Science, Scopus շտեմարաններում ընդգրկված ամսագրերում գիտական հոդվածներ, գիտական նախագծերի ներկայացում տեղական և միջազգային կազմակերպություններ, գրախոսականներ, սեմինարներ, սոցիալական ցանցերում գիտահանրամատչելի նյութերի ներկայացում, հաշվետվություն, զեկույց	4-րդ եռամսյակ	68176.2
Ընդամենը						**227253.8**

Կազմակերպության տնօրեն՝ _____ (ԱՐՍԵՆ ԱՌԱՔԵԼՅԱՆ)
(ստորագրություն)

Ծրագրի գիտական ղեկավար՝ _____ (ԱՐՍԵՆ ԱՌԱՔԵԼՅԱՆ)
(ստորագրություն)

Հավելված N 4
«27» 01 2022թ.
N 2-17 պայմանագրի

ՆԱԽԱՀԱՇԻՎ

«Մարդու, կենդանիների, բույսերի ֆունկցիոնալ և պոպուլյացիոն գենոմիկա և բջջային ակտիվության կարգավորում» ծրագրի

հազար դրամ

Հ/հ	Հոդվածի անվանումը	Ֆինանսավորման ծավալը	այդ թվում՝			
			1-ին եռամսյակ (20%)	2-րդ եռամսյակ (25%)	3-րդ եռամսյակ (25%)	4-րդ եռամսյակ (30%)
1	աշխատավարձ՝ ներառյալ եկամտային հարկը	187696.8	*31282.8*	*46924.2*	*46924.2*	*62565.6*
2	տնտեսական և այլ ծախսեր	39557.0	*14168.0*	*9889.2*	*9889.2*	*5610.6*
ԸՆԴԱՄԵՆԸ		227253.8	*45450.8*	*56813.4*	*56813.4*	*68176.2*

Կազմակերպության տնօրեն՝ _____ (ԱՐՍԵՆ ԱՌԱՔԵԼՅԱՆ)
(ստորագրություն)

Կազմակերպության գլխավոր հաշվապահ՝ _____ (ՏԻԳՐԱՆ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ)
(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված N 4.1
«27» 01 20.22
N 477 պայմանագրի

ՆԱԽԱՀԱՇՎԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԱՅԼ ԾԱԽՍԵՐ՝

Հ/հ	Ծախսերի անվանումը	Ֆինանսավորման ծավալը, առանց ԱԱՀ (հազար դրամ)
1	Կոմունալ ծառայություններ, այդ թվում՝	25100.0
	էլեկտրաէներգիայի ծառայություն	*12000.0*
	գազի ծառայություն	*9000.0*
	ջրամատակարարման ծառայություն	*1900.0*
	կապի ծառայություն	*1700.0*
	աղբահանություն	*500.0*
2	Գույք	
3	Սարքեր և սարքավորումներ	
4	Նյութեր	14457.0
5	Գործուղումներ	
6	Գիտական միջոցառումների կազմակերպում	
7	Արշավախմբեր	
8	Հրատարակման ծախսեր	
	.....	
Ընդամենը		39557.0

Կազմակերպության տնօրեն՝ _____ (ԱՐՍԵՆ ԱՌԱՔԵԼՅԱՆ)
(ստորագրություն)

Կազմակերպության գլխավոր հաշվապահ՝ _____ (ՏԻԳՐԱՆ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ)
(ստորագրություն)

Կ.Տ.

* *Բուհերում իրականացվող ծրագրերի համար չի լրացվում*

Հավելված N 5
«__27___»_____01_____ 2022 թ.
N _____Ե-17_____ պայմանագրի

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐՈՂՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Մարդու, կենդանիների, բույսերի ֆունկցիոնալ և պոպուլյացիոն գենոմիկա և բջջային ակտիվության կարգավորում» ծրագրի

Հ/հ	Ազգանուն, անուն, հայրանուն	Պաշտոն	Գիտական աստիճան	Ամսական աշխատավարձ՝ ներառյալ եկամտային հարկը (հազար դրամ)
1	Առաքելյան Արսեն Արտաշեսի	տնօրեն	կ.գ.դ.	400.0
2	Ցականովա Գոհար Վասիլի	տնօրենի տեղակալ գիտ. գծով	կ.գ.թ.	300.0
3	Խաչատրյան Զարուհի Աշոտի	գիտական քարտուղար	կ.գ.թ.	250.0
4	Պոլիխատկո Բորիս Վլադիմիրի	տնօրենի տեղակալ տնտ. գծով		350.0
5	Մարդումյան Սոնա Սերգեյի	տնօրենի օգնական-քարտուղար		250.0
6	Մելիքսեթյան Գոհար Հովհաննեսի	տեսուչ կադրերի գծով	կ.գ.թ.	250.0
7	Կիրակոսյան Տիգրան Ազատի	գլխավոր հաշվապահ		350.0
8	Հայրապետյան Նարինե Հովհաննեսի	գնումների համակարգող		250.0
9	Հովհաննիսյան Զուլիետտա Արթուրի	հաշվետար		100.0
10	Եպիսկոպոսյան Լևոն Միխայելի	լաբ. վարիչ (ոչ լրիվ)	կ.գ.դ.	306.15
11	Նազարյան Կարեն Բաբկենի	լաբ. վարիչ (ոչ լրիվ)	կ.գ.դ.	174.95
12	Կարալյան Զավեն Ալեքսանդրի	լաբ. վարիչ (ոչ լրիվ)	կ.գ.դ.	306.15
13	Մանուկյան Գայանե Փաշիկի	լաբ. վարիչ (ոչ լրիվ)	կ.գ.թ.	306.15
14	Զաքարյան Հովակիմ Սարգսի	լաբ. վարիչ (ոչ լրիվ)	կ.գ.թ.	306.15
15	Բաբայան Նելլի Սամվելի	լաբ. վարիչ (ոչ լրիվ)	կ.գ.թ.	306.15
16	Սեդրակյան Անահիտ Միքայելի	լաբ. վարիչ	կ.գ.թ.	349.9
17	Մարգարյան Քրիստինե Սերյոժայի	խմբի ղեկավար (ոչ լրիվ)	կ.գ.թ.	201.4
18	Վարդանյան Վիտյա Անդրանիկի	խմբի ղեկավար	կ.գ.թ.	230.2
19	Հարությունյան Ռուբեն Միքայելի	առաջատար գիտաշխատող (համատ.)	կ.գ.դ., թղթ. անդ.	31.25
20	Կարալովա Ելենա Միքայելի	առաջատար գիտաշխատող (ոչ լրիվ)	կ.գ.դ.	125.0
21	Այվազյան Վիոլետա Արտաշեսի	ավագ գիտաշխատող	կ.գ.թ.	199.75
22	Ներսեսովա Լյուդմիլա Ստեփանի	ավագ գիտաշխատող	կ.գ.թ.	199.75
23	Հովսեփյան Լաուրա Միքայելի	ավագ գիտաշխատող (ոչ լրիվ)	կ.գ.թ.	99.9
24	Մայիլյան Կարինե Ռաֆիկի	ավագ գիտաշխատող	կ.գ.դ.	199.75
25	Մկրտչյան Գոհար Մարատի	ավագ գիտաշխատող	կ.գ.թ.	199.75
26	Զախարյան Ռոքսանա Վլադիսլավի	ավագ գիտաշխատող (համատ.)	կ.գ.թ.	99.9
27	Ստեփանյան Անի Սմբատի	ավագ գիտաշխատող	կ.գ.թ.	199.75
28	Առաքելով Գրիգոր Գալուստի	ավագ գիտաշխատող	կ.գ.թ.	199.75
29	Ներսիսյան Լիլիթ Ռոբերտի	ավագ գիտաշխատող	կ.գ.թ.	199.75
30	Գազարյանց Մարինա Գուրգենի	գիտաշխատող	կ.գ.թ.	150.15
31	Պողոսյան Լինա Հենրիկի	գիտաշխատող	կ.գ.թ.	150.15

32	Առաքելովա Էլինա Ալեքսանդրի	գիտաշխատող	կ.գ.թ.	150.15
33	Չավուշյան Անդրանիկ Ստեփանի	գիտաշխատող (ոչ լրիվ)	կ.գ.թ.	97.6
34	Հայրապետյան Վարդուհի Հովհաննեսի	գիտաշխատող	կ.գ.թ.	150.15
35	Աճեմյան Սոֆի Արմանի	գիտաշխատող (համատ.)	կ.գ.թ.	97.6
36	Մարտիրոսյան Գևորգ Վոլոդիայի	գիտաշխատող (ոչ լրիվ)	կ.գ.թ.	18.8
37	Ղազարյան Հովսեփ Կարապետի	գիտաշխատող (համատ.)	կ.գ.թ.	97.6
38	Ավետյան Դիանա Գագիկի	գիտաշխատող	կ.գ.թ.	150.15
39	Սարգսյան Նատալյա Կոնստանտինի	գիտաշխատող	կ.գ.թ.	150.15
40	Գրիգորյան Ռուզաննա Միշայի	գիտաշխատող	կ.գ.թ.	150.15
41	Մելյան Գայանե Հրանտի	գիտաշխատող (համատ.)	կ.գ.թ.	75.1
42	Հակոբյան Գոհար Վլադիմիրի	գիտաշխատող	կ.գ.թ.	150.15
43	Աբրոյան Լիանա Օնիկի	գիտաշխատող	կ.գ.թ.	150.15
44	Հակոբյան Լինա Հայրապետի	գիտաշխատող	կ.գ.թ.	150.15
45	Ոսկանյան Հենրի Եղիշեի	գիտաշխատող (համատ.)	ան.գ.թ.	75.1
46	Սեմերջյան Զառա Բաբկենի	գիտաշխատող (ոչ լրիվ)	կ.գ.թ.	112.65
47	Հովհաննիսյան Այվարդ Իլիասի	գիտաշխատող (ոչ լրիվ)	կ.գ.թ.	75.1
48	Ղազարյան Գայանե Սուրենի	գիտաշխատող	կ.գ.թ.	150.15
49	Զանգինյան Հասմիկ Վլադիմիրի	գիտաշխատող	կ.գ.թ.	150.15
50	Հովհաննիսյան Անահիտ Արմենի	գիտաշխատող	կ.գ.թ.	150.15
51	Պողոսյան Դավիթ Ալբերտի	գիտաշխատող	կ.գ.թ.	150.15
52	Իզմաիլյան Ռոզա Արտաշեսի	գիտաշխատող	կ.գ.թ.	150.15
53	Հակոբյան Աստղիկ Վարդանի	գիտաշխատող	կ.գ.թ.	150.15
54	Առաքելով Վահրամ Գալուստի	գիտաշխատող	կ.գ.թ.	150.15
55	Ավետիսյան Աիդա Սերգեյի	գիտաշխատող		150.15
56	Առաքելովա Կարինե Ավետիքի	գիտաշխատող		150.15
57	Խոնդկարյան Լուսինե Հերբերտի	գիտաշխատող		150.15
58	Մարգարյան Սոնա Մովսեսի	գիտաշխատող		150.15
59	Արզումանյան Հրանուշ Հարությունի	կրտսեր գիտաշխատող (ոչ լրիվ)	կ.գ.թ.	59.9
60	Ավագյան Հրանուշ Ռոբերտի	կրտսեր գիտաշխատող	կ.գ.թ.	119.75
61	Բայրամյան Նանե Վաչեի	կրտսեր գիտաշխատող (ոչ լրիվ)	կ.գ.թ.	59.9
62	Պետրոսյան Մարիամ Սամվելի	կրտսեր գիտաշխատող (համատ.)	կ.գ.թ.	59.9
63	Անտոնոսյան Մարիյա Ալիկի	կրտսեր գիտաշխատող	կ.գ.թ.	119.75
64	Սահակյան Հարություն Կարապետի	կրտսեր գիտաշխատող	կ.գ.թ.	119.75
65	Պողոսյան Արփինե Արմենի	կրտսեր գիտաշխատող (ոչ լրիվ)		59.9
66	Չիլինգարյան Գարրի Վաչագանի	կրտսեր գիտաշխատող		119.75
67	Մելքոնյան Անի Հայկի	կրտսեր գիտաշխատող (համատ.)		89.8
68	Թադևոսյան Գոհար Լյովայի	կրտսեր գիտաշխատող		119.75
69	Ապրեսյան Լիլիթ Սահակի	կրտսեր գիտաշխատող		119.75
70	Աբրահամյան Աստղիկ Աբրահամի	կրտսեր գիտաշխատող		119.75
71	Դավթյան Հասմիկ Հենրիկի	կրտսեր գիտաշխատող		119.75
72	Զախարյան Մագդալինա Կարենի	կրտսեր գիտաշխատող		119.75
73	Մարտիրոսյան Անուշ Արամի	կրտսեր գիտաշխատող		119.75
74	Հակոբյան Սիրաս Աշոտի	կրտսեր գիտաշխատող		119.75
75	Նիկողոսյան Մարիյա Արմենի	կրտսեր գիտաշխատող		119.75
76	Հարությունյան Քրիստինե	կրտսեր գիտաշխատող		119.75

	Սուրենի			
77	Արաբյան Էրիկ Արմենի	կրտսեր գիտաշխատող		119.75
78	Դավթյան Արմինե Նորայրի	ավագ լաբորանտ-հետազոտող (համատ.)		54.9
79	Ալխազյան Մարիամ Մարտինի	ավագ լաբորանտ-հետազոտող (համատ.)		54.9
80	Ղոնյան Սուսաննա Արամի	ավագ լաբորանտ-հետազոտող (ոչ լրիվ)		54.9
81	Մանուկյան Ալիսա Թադևոսի	ավագ լաբորանտ-հետազոտող (ոչ լրիվ)		27.45
82	Հակոբյան Սոնա Արմենի	ավագ լաբորանտ հետազոտող (ոչ լրիվ)		54.9
83	Մկրտչյան Սաթենիկ Լևոնի	ավագ լաբորանտ-հետազոտող (ոչ լրիվ)		54.9
84	Պարոնյան Ադրինե Կարենի	ավագ լաբորանտ-հետազոտող (ոչ լրիվ)		54.9
85	Ավետիսյան Կարինե Ռաֆիկի	ավագ լաբորանտ-հետազոտող (ոչ լրիվ)		54.9
86	Հակոբյան Թամարա Արսենի	ավագ լաբորանտ (ոչ լրիվ)		51.3
87	Գասպարյան Սեդա Սամվելի	ավագ լաբորանտ (ոչ լրիվ)		51.3
88	Բուրջախյան Հռիփսիկ Առաքելի	ավագ լաբորանտ (ոչ լրիվ)		23.2
89	Սարգսյան Արսեն Արթուրի	ավագ լաբորանտ (ոչ լրիվ)		51.3
90	Մկրտչյան Տիգրան Զարգանդի	ավագ լաբորանտ (ոչ լրիվ)		51.3
91	Սիրունյան Թամարա Կարենի	ավագ լաբորանտ (ոչ լրիվ)		51.3
92	Խաչատրյան Գիսանե Վահագնի	ավագ լաբորանտ (ոչ լրիվ)		51.3
93	Մուրադյան Նելլի Գևորգի	ավագ լաբորանտ (ոչ լրիվ)		51.3
94	Մինասյան Արփինե Դավիթի	ավագ լաբորանտ (ոչ լրիվ)		25.65
95	Բաղդասարյան Բագրատ Վահագնի	ավագ լաբորանտ (ոչ լրիվ)		51.3
96	Գրիգորյան Ռաֆայելա Խորենի	ավագ լաբորանտ (ոչ լրիվ)		25.65
97	Գալստյան Բագրատ Սերգեյի	ավագ լաբորանտ (ոչ լրիվ)		51.3
98	Նավոյան Գագիկ Զավենի	պարետ, վարորդ-մատակարար		155.0
99	Հարությունյան Համլետ Սարգսի	ինժեներ-էլեկտրիկ		115.0
100	Եզիկյան Գրիգորի Շավարշի	գլխավոր ճարտարագետ		155.0
101	Հովակիմյան Ռոբերտ Գրիգորի	բանվոր, հնոցապան		125.0
102	Կիրակոսյան Դավիթ Աշոտի	բանվոր, հնոցապան		100.0
103	Հովակիմյան Գրիգոր Ռոբերտի	բանվոր, հնոցապան		100.0
104	Թովմասյան Արսեն Վազգենի	բանվոր, հնոցապան		125.0
105	Բասեյան Արթուր Ասատուրի	պահակ		100.0
106	Աղգաշյան Ռոբերտ Արխոյի	պահակ		100.0
107	Ջավադյան Ժորա Ավագի	պահակ		100.0
108	Ղազանչյան Միհրան Գևորգի	պահակ		100.0
109	Հովակիմյան Երանուհի Խաչիկի	մաքրուհի		100.0

110	Աբաջյան Ալվարդ Գրիգորի	մաքրուհի		100.0
111	Հովակիմյան Վարդուհի Ռոբերտի	մաքրուհի		100.0
112	Կուրղինյան Միհեր Դավիթի	կենդանանոցի պատասխանատու		125.0
113	Գևորգյան Կարինե Ռաֆայելի	քաղպաշտպ. շտաբի պետ (համատ.)		47.0
114	Բաղդասարյան Արմեն Արտյոմի	վերելակների սպասարկող		60.5
115	Նախատեսվում է ընդունել	գիտաշխատող		150.15
116	Նախատեսվում է ընդունել	կրտսեր գիտաշխատող		119.75
117	Նախատեսվում է ընդունել	կրտսեր գիտաշխատող (ոչ լրիվ)		65.95
Ընդամենը				15641.4

Կազմակերպության տնօրեն՝ _____ (ԱՐՍԵՆ ԱՌԱՔԵԼՅԱՆ)
(ստորագրություն)

Կազմակերպության անձնակազմի կառավարման բաժնի պետ՝ _____ (ԳՈՀԱՐ ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆ)
(ստորագրություն)

Կ.Տ.